SCIENCE NEWS .

Հայոց գիտական-մշակութային կյանքը այսօր բնությանը հասած դժվարին, արգելանք պայմաններում շարունակում է մնալ անվարան, առաջընթացի մեջ:

Ամենօրյա առցանց գործունեությանը զուգընթաց՝ կազմակերպվում են գիտաժողովներ, տեղի են ունենում հանդիպումներ, որոնք կարևոր են իրականության ճանաչման, մշակութային անցյալի շատ խնդիրների նոր քննարկման ու լուսաբանման համար:

Այդպիսի էր այս տարվա հուլիս ամսվա 6-8-ին ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կազմակերպած առցանց գիտական նստաշրջանը, որը նվիրված է նոր ժամանակի մեծություններից Մխիթարյան միաբանության պարծանք Հ. Ղ. Ալիշանի ծննդյան 200-ամյակին: Թե ինչ դեր է խաղացել այդ միաբանությունը հայ մտավոր կյանքի առաջընթացի մեջ, դժվար է գերագնահատել:

Այսօր ևս Ալիշանի գրական, հնագիտական, աղբյուրագիտական, պատմական-աշխարհագրական գրավոր ժառանգությունը անսպառ աղբյուր է հայագիտության և հայերենագիտության անդաստանում:

Լայն ընդգրկում ուներ այդ նստաշրջանը, մասնակցում էին մայր հայրենիքի և արտերկրի գիտական բազմաթիվ հաստատությունների գիտնականներ՝ հոգևոր դասի ներկայացուցիչներ, բանասերներ, գրականագետներ, գրողներ, պատմաբաններ, աղբյուրագետներ, լեզվաբաններ: Միջոցառումը կազմակերպված էր մեծ հոգածությամբ, հաջողությամբ ավարտվեց ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յու. Մ. Սուվարյան), Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի (բ. գ. դ. Վ. Գ. Դևրիկյան) ներդրած ջանքերի շնորհիվ:

Ի թիվս ակադեմիական հումանիտար այլ ինստիտուտների՝ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը նույնպես ունեցավ իր ակտիվ մասնակցությունը: Նրա աշխատակիցներից երեքը հանդես եկան լեզվի հարցերի առնչությամբ Հ. Ղ. Ալիշանի վաստակի քննությանը վերաբերող ուշագրավ զեկուցումներով. Ինստի-

տուտի տնօրեն, բ. գ. դ. Վ. Լ. Կատվալյանի զեկուցման թեման էր «Ալիշանը հայ միջնադարյան բանաստեղծության բարբառային շերտի ուսումնասիրող և կիրառող», բ. գ. դ. Հ. Հ. Մեսրոպյանի զեկուցման թեման՝ «Բուսանունները Հ. Ղ. Ալիշանի «Այրարատ»-ում», բ. գ. դ. Վ. Գ. Համբարձումյանի թեման՝ «Ալիշանի մտքի երեք պահ (լեզվագետ. դիցաբան, բառագետ)»: Հիշյալ զեկուցումներում նշվեցին նաև առաջարկություններ մեծանուն հայագետի լեզվագիտական գործունեության առանձին ուսումնասիրության վերաբերյալ, որն անհրաժեշտ է հայոց լեզվի նոր շրջանի պատմության համար: Զեկուցումների հետ կապված եղան տարբեր կարգի հարցեր, հնչեցին գնահատության խոսքեր:

Ուստի լեզվի ինստիտուտի մասնակցությունը, թեկուզ միայն գիտական համագործակցության իմաստով, միանգամայն տեղին էր և արդյունավետ, իսկ թեմատիկայի առումով՝ կարևոր ուշ միջնադարի այդ մեծ գիտնականի գիտական ժառանգության լայն գնահատության հարցում: